

ՅԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՄԱՀԱՐԹԵՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԹԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ
ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԻՄՆՈՒՂԻՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Հ.Կ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ Համայնքներին տրվող պաշտոնական արանսֆերաների տրամադրման կարգը 1999թ. էապես փոփոխվեց: Այս անգամ ՀՀ Համայնքներին դոտացիայի Հատկացումը իրականացվեց «Ֆինանսական Համահարթեցման մասին» ՀՀ նոր ընդունված օրենքով, որը նպատակ էր դնում «Տարածքային ինքնա-կառավարման մարմինների (այսուհետև՝ ՏԻՄ) կողմից օրենքով սահմանված լիազորությունների իրականացման համար Համայնքների ֆինանսական Հնարավորությունների միջև առկա տարբերության նվազեցումը» (Հոդված 3):

Նախ սահմանվում է Համայնքներին 1999թ. Հատկացվող դոտացիաների ընդհանուր գումարի նվազագույն չափը (դրա սահմանման օրենսդրական Հիմքը տե՛ս բյուջետային Համակարգի մասին օրենքում՝ Հոդված 20), ապա, Հիմք ընդունելով ՏԻՄ-երի «Տնտեսական վիճակը բնութագրող գործոնները» (Հոդված 5), որոշվում է դոտացիաների գումարների չափը ըստ առանձին Համայնքների: Ըստ օրենքի՝ տնտեսական վիճակը բնութագրող այդ գործոններն են.

ա) Համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող եկամտահարկի, Հոդի Հարկի և դույքահարկի մակարդակը («ա» գործոն): Սրանով դոտացիա է Հատկացվում միայն այն Համայնքներին, որոնց բնակչության մեկ շնչին ընկնող եկամտահարկի, Հոդի Հարկի և դույքահարկի գծով եկամտի մակարդակը ցածր է Հանրապետության բնակչության մեկ շնչին ընկնող Համապատասխան միջին մակարդակից:

բ) Համայնքի բնակչության թվաքանակը («բ» գործոն): Դոտացիա է Հատկացվում բոլոր Համայնքներին՝ տվյալ Համայնքի բնակչության թիվը բազմապատկելով մեկ շնչին ընկնող դոտացիայի մեծության հետ:

դ) Համայնքի՝ պետության կողմից առաջնային օժանդակություն ստանալու անհրաժեշտությունը («գ» գործոն), որով նախատեսված դոտացիայի գումարը բաշխվում է վերը նշված «ա» և «բ» գործոնների գործողության նմանակությամբ, միայն թե սահմանված ցանկով՝ Համայնքների Համար:


Ֆինանսական Համահարթեցումը ըստ օրենքի արտացոլված է №1 սխեմայով:

«ՀՀ 1999թ. պետական բյուջեի մասին» օրենքով նախատեսվել է 1999թ. պետական բյուջեից մոտ 4,69 մլրդ. դրամ տրանսֆերտային փոխանցումներ տեղական ինքնակառավարման մարմիններին, որից ընթացիկ տրանսֆերտների ձևով Համահարթման դոտացիա՝ 4,39 մլրդ. դրամ և նպատակային Հատկացումներ՝ սուբսիդիա, 300 մլն. դրամ: Իր Հերթին, Համահարթման գծով 4,39 մլրդ. դրամ Հատկացումները ըստ գործոնների բաշխելու համար հետևյալ տեսակարար կշիռներն են սահմանվել. «ա» և «բ» գործոնների համաձայն բաշխվելու է դոտացիաների 85 %-ը (3,73 մլրդ. դրամ), 70 %-ը (3,07 մլրդ. դրամ)՝ ըստ Համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող եկամտահարկի, Հոդի Հարկի և դույքահարկի մակարդակի, իսկ 15 %-ը (0,658 մլրդ. դրամ)՝ ըստ բնակչության թվաքանակի գործոնի: Պետության կողմից ըստ առաջնային

օժանդակություն ստանալու գործոնի նախատեսվում է բաշխել դոտացիայի 15 %-ը՝ 0,658 մլն. դրամ, որից 4 %-ը՝ 175,5 մլն դրամ, ըստ Համայնքի բնակչության մեկ շնչին ընկնող եկամտահարկի, հողի հարկի և գույքահարկի մակարդակի, իսկ 11 %-ը՝ 0, 483 մլն. դրամ, բնակչության թվաքանակի չափանիշով: Ըստ մարզերի, Համայնքներին 1999թ. տրվող դոտացիաների բաշխման արդյունքները (տե՛ս աղյուսակ 1) ցույց են տալիս, որ դրանց 33,4 %-ը՝ 1,47 մլրդ. դրամ, բաժին է ընկել Երևանի 12 Համայնքներին, իսկ 66,6 %-ը (2,92 մլրդ. դրամ)՝ մնացած 10 մարզերի 914 Համայնքներին:

Սխեմա 1.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՍՆԱԶԱՐԹԵՑՄԱՆ ՄԻՆԵՄԱ



Ըստ մարզերի առանձնապես փոքր է Վայոց Ձորի, Արազածոտնի, Արարատի և Տավուշի Համայնքների բաժինը, որոնք Համապատասխանաբար ստանում են ամբողջ դոտացիաների 1.9, 3.3, 3.6, 4.7 տոկոսները: Ասենք, Վայոց Ձորի բոլոր՝ թվով 44 Համայնքներին միասին վերցրած բաժին է ընկել ավելի քիչ դոտացիա (82.6 մլն դրամ), քան Հատկացվել է, օրինակ, 25 Հազ. բնակիչ ունեցող Արթիկ քաղաքին (85.7 մլն. դրամ): Դոտացիայի միջին չափերի առումով ամենացածր ցուցանիշներ ունեն Արազածոտնի, Արարատի Համայնքները (Համապատասխանաբար՝ 1.29, և 1.65 մլն. դրամ), իսկ ամենաբարձրը, բնականաբար, Երևանի Համայնքներինն է՝ միջինը 122.3 մլն դրամ:

Տվյալները միաժամանակ վկայում են, որ խիստ ընդգծված տարբերություն կա նաև քաղաքային և գյուղական Համայնքների կտրվածքով Հատկացվող դոտացիաների միջև: Դոտացիաների Հիմնական մասը՝ 83 %-ը, ընկնում է թվով 59 քաղաքային Համայնքներին (որից Երևանի թաղերին՝ 33.4 %-ը, մինչդեռ 867 գյուղական Համայնքներին՝ 13 %-ը): Հանրապետության խոշոր քաղաքների՝ Երևանի, Գյումրու, Վանաձորի բաժինը կազմում է 49.3 %, այսինքն՝ դոտացիաների մոտ կեսը: Քաղաքային Համայնքների Համար դոտացիաների միջին մեծությունը կազմում է 61.7 մլն դրամ, առանց Երևանի

Թաղային Համայնքների՝ 46.3 մլն. դրամ, մինչդեռ գյուղական Համայնքներում՝ 0.86 մլն դրամ: Ընդ որում, գյուղական բոլոր 867 Համայնքներից մոտ 130-ը պետությունից ՀամաՀարթեցման դրտացիա է ստանում մինչև 6.7 - 100 Հազ. դրամ: Այսինքն, պետությունը, ասենք, Շիրակի մարզի Լեռնադյուղ Համայնքին Հատկացնում է 6.7 Հազ. դրամ (մեկ աշխատողի նվազագույն աշխատավարձից մի փոքր ավել) որ երևութապես է ՀամաՀարթեցման խնդիրը լուծում: Ըստ 1999թ. պետական բյուջեի մասին օրենքի 16-րդ Հոդվածի, 1999թ. պետական բյուջեի կատարման ընթացքում ենթակա են պաշտպանության և ամբողջ ծավալով Փինանսավորելու են Համայնքների բյուջեներին տրվող դրտացիաները, այնպես որ Լեռնադյուղը անպայման կստանա այդ 6.7 Հազ. դրամը:

Աղյուսակ 1

ՀՀ ՊԵՏԱԿԱՆ, ԲԱՌԱՋԱՆԻՑ 1999 Կ. ՀԱՄԱԶԵՔՆԵՐԿՆ ՏՐՎՈՂ ԴՈՏԱԹԻԱՆԵՐԸ ԸՍՏ ՄԱՐԶԵՐԿ
ԵՎ ԴՐԱՆՑ ՔԱՂԱՔՆԵՐԿ

Մարզեր	Համայնքների թիվը	Դրտացիա, մլն. դրամ	Դրտացիայի տես. կշիռը ընդ- Հանուրի մեջ, %-ներով	Դրտացիայի միջին չափը, մլն. դրամ
1	2	3	4	5
Երևան քաղաքի Թաղային Համայնքներ	12	1467.6	33.4	122.3
Արագածոտնի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	114 3	147.0 89.1	3 3 2.0	1.29 29.7
Արարատի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	97 4	160.1 96.4	3 6 2 2	1.65 24.1
Արմավիրի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	97 3	205.2 160.4	4 7 3.7	2.1 53.5
Իեղարքունիքի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	92 5	308.1 189.1	7 0 4.3	3.3 37.8
Լոռու. Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	113 7	590.9 503.1	13.5 11.5	4.6 71.9
Կոտայքի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	67 8	286.1 229.1	6.5 5.2	4.3 28.6
Շիրակի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	119 3	513.8 455.5	11.7 10.4	4.3 151.8
Սյունիքի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	109 7	361.4 300.6	8.2 6.8	3.3 42.9
Վայոց ձորի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	44 3	82.6 47.7	1.9 1.1	1.9 15.9
Տավուշի Համայնքներ այդ թվում՝ քաղաքային	62 4	265.9 103.3	6.0 2.3	4.3 25.8
Ընդամենը այդ թվում՝ քաղաքային գյուղական	926 59 867	4388.7 3641.9 748.8	100 83.0 13.0	4.74 61.7 0.86

Վերոբերյալի զուտ թվական վերլուծությունը վկայում է, որ Համահարթեցման մասին օրենքով դոտացիաների բաշխման մեխանիզմն արդեն իսկ ունի լուրջ թերություններ: Դրա հետևանքով է, որ ընդգծված մեծ ճեղքվածքներ կան գյուղական և քաղաքային Համայնքներին դոտացիաների հատկացման միջև, որ շատ Համայնքներին տրված դոտացիաները այնքան փոքր են, որ անհմատ է անգամ դրանց փոխանցումը: Դրությունը փայլուն է՝ նաև պետության կողմից առաջնային օժանդակություն ստանալու անհրաժեշտություն ունեցող Համայնքների դեմով առանձնացված Համահարթեցման դոտացիաների հատկացման խնդրում: Նախ, այս ցանկի մեջ ընդգրկված Համայնքների թիվը շատ մեծ է՝ 260 Համայնք, երկրորդ, այստեղ ընդգրկված են նաև 17 քաղաքներ (մենք այն կարծիքին չենք, թե այդ ցուցակում քաղաքներ չպետք է լինեն), որոնք առանց այդ էլ դոտացիաներից այլ գործոնների հաշվին շատ են օգտվում, երրորդ, մնացած 243 (260 - 17) Համայնքներից շատ քչերում է, որ Համահարթեցման երեք՝ «ա», «բ» և «գ» գործոններով ստացած ամբողջ դոտացիան անցնում է մեկ միլիոն դրամից, ինչը ինքնին մեծ գումար է: Օրինակ, Շիրակի մարզի 34 Համայնքների Համար պատկերը հետևյալն է (տե՛ս աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՌԱՋՆԱԹԻՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ 34 ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ
ԽՄԲԱՎՈՐՈՒՄԸ ՀՍՏ ԴՈՏԱԹԻԱՆԵՐԻ ՁԱՓԻ

Խմբավորում ըստ Հատկացվող դոտացիաների, Հազ. դր.	մին է 100	100– 200	201– 300	301– 500	501– 700	701– 1000	1001– 2000	85700	7200
Համայնքների թիվը	4	7	6	8	4	2	1	Ք. Ար- թիկ	Պեմ- զաչեն

Սակայն խնդիրը միայն ըստ Համայնքների դոտացիաների բաշխման թվական արդյունքները հավանե-չհավանելը է: Այստեղ կան պատասխանի կարոտ ավելի լուրջ հարցեր: Այս օրենքի գործադրմամբ Համայնքները, փաստորեն, ազատվել են իրենց անհրաժեշտ դոտացիաների սահմանման գործընթացին մասնակից լինելուց, և այդ դոտացիաները ստանում են երկնառաք մասնաշաղկապ տեսք: Սա լուրջ բացթողում է: Նման ձևով դոտացիայի տրամադրումը անմասն է մնում Համայնքների առանձնահատկությունների հաշվառումից, մասնավորապես որ օրենսդիրը, չարժեքով «որքան պարզ, այնքան լավ» սկզբունքով, հաշվարկի հիմքում դրել է ընդամենը երկու ցուցանիշ՝ Համայնքի և Հանրապետության բնակչության թիվն ու Համայնքի հարկային եկամուտների ծավալը, ցուցանիշներ, որոնք չեն արտացոլում Համայնքի առջև կանգնած պարտադիր կատարվելիք աշխատանքների ֆինանսավորումը: Այս երկու ցուցանիշների օգնությամբ ընդամենը պարզվում է, թե որքան գումար կարող է տալ կենտրոնական իշխանությունը այս կամ այն Համայնքին, բայց անպատասխան է մնում այն հարցը, թե որքան դոտացիա է իրականում անհրաժեշտ այդ Համայնքներին: Բաշխման ընդունված մեխանիզմը հաշվի չի


առնում, որ, օրինակ, մեկ բնակչի Հաշվով խմելու ջրի ապահովումը, որպես Համայնքի պարաաղիւր լիազորութեան իրականացում, տարբեր ծախսեր է պահանջում տարբեր Համայնքներից, և այդ տարբերութիւնը մեծ է Հատկապես դուրսական և քաղաքային Համայնքների կտրվածքով: Այսպես, շատ դուրեւրում այդ Հարցը լուծվում է՝ գլուղում մի քանի տեղ ընդհանուր օգտագործման աղբիւր ապահովելով, իսկ քաղաքներում ջրային ցանցը խիստ ճշգրտութեամբ է, քայքայված, ու ջրապահովման Համար մեծ գումարներ են պահանջում: Բացի այդ, այս Հարցում կարևոր են, թե պլանային ժամկետում Համայնքները պարտադիր լիազորութեան իրականացման ինչ մոդել են ընտրել, և արդէ՞ք պետութեանը Համաճայն է այդ խնդրին օժանդակել:

Այլ այլ կարևոր դիտողութիւն ևս: Վերջին Հաշվով դոտացիաների նպատակն է՝ ծածկել սլանային տարվա պարտադիր լիազորութեանների կատարման անհրաժեշտ միջոցների ճեղքվածքը, մինչդեռ Ֆինանսական Համաճարթեցման օրենքով Հաշվարկների Հիմքում դրվում են Համայնքների ամպլանիների Հաստատած նախորդ բյուջետային տարվա Համայնքների ընդհանուր Համապատասխան ցուցանիշները: Դա ևս վկայում է, որ ընդամենը իրականացվում է և՛ ճեղք գումարների, կարելի է ասել՝ պարզունակ մեխանիզմով միջինացված բաշխում և ոչ թե դոտացիաների նկատմամբ իրական պահանջների լիարարում:

Ֆինանսական Համաճարթեցման գործող Համակարգի թերութեաններից է այն, որ այդ Համակարգը ի վիճակի է արձագանքելու այն փոփոխութեաններին, որ կարող են տեղի ունենալ Համայնքների պարտադիր լիազորութեանների շրջանակի փոփոխութեան պայմաններում: Այսպես, Հանրապետութեան որոշ Համայնքներում թվով 58 դպրոցներ մարզպետարաններից անցել են տեղական ինքնակառավարման Համակարգ, և, բնականաբար, այստեղ մեծանալու են այդ Համակարգի պահպանման Հետ կապված ծախսերը, մինչդեռ Ֆինանսական Համաճարթեցման մեխանիզմը անտարբեր է մնալու այս և նման այլ երևույթների նկատմամբ:

Ֆինանսական Համաճարթեցման օրենքը, առաջին թաղ քայլ լինելով, մասնավոր, դոտացիաների Հատկացումը սուբյեկտիվ մոտեցումներից ընտրված չափանիշներին Համապատասխան օբյեկտիվորեն բաշխելու, ինչպես և զարգացող Համայնքներին («բ» գործոնի Հաշվին) և առաջնային օժանդակութեան կարող Համայնքներին («դ» գործոնի Հաշվին) լրացուցիչ միջոցներ Հատկացնելու Հետաքրքիր գաղափարների առաջադրման և իրականացման Հարցում միաժամանակ կարիք ունի էական բարելավումների՝ ինչպես բուն Համաճարթեցման իմաստավորման, այնպես էլ դոտացիաների Հատկացման մեխանիզմի կատարելագործման ուղղութեամբ:

Կարծում ենք, որ Ֆինանսական Համաճարթեցումը միայն դոտացիաների միջոցով բավականին նեղացնում է բուն Համաճարթեցման գաղափարի իրականացումը: Ուստի, առաջարկում ենք «Ֆինանսական Համաճարթեցման մասին» օրենքը վերանայել՝ դրանում Հարկային Համաճարթեցման, ինչպես սուբյեկտների տեսքով պաշտոնական տրանսպերտների Հատկացման սկզբունքներն ու դրույթները ներառելու առումով: Նման ձևով վերակառուցված օրենքը Հարկաբյուջետային Համաճարթեցում է ներկայացնելու, որը կնհրաւի և Ֆինանսական Համաճարթեցումը Համայնքների Համար՝ իր լրիվ գինանոցով, և Հարկային Համաճարթեցումը: Այն սլաուկերացնում ենք Հետևյալ տեսքով (տե՛ս սխեմա 2):



Հանրապետության Համահարթեցման առաջին խումբը իրազորեցվում է Համայնքների պարտադիր լիազորությունների ֆինանսական ապահովման և քիչ թե՛ շատ Հավասար ֆինանսական պայմաններով պարտադիր լուծման կարող առաջադրանքների կատարումը: Խնդրի լուծումն այս ուղղությամբ կատարվելու է Համայնքներին ամրագրված Հարկային Համակարգի և դուրսացման տրամադրման միջոցով:

Հարկային Համահարթեցման մասին աշխատանքները կատարվելու են ամեն տարի՝ պետական բյուջեի նախագծի կազմման աշխատանքների շրջանակներում, Հետևյալ Հիմնական ուղղություններով՝ Համայնքների բյուջեներին Հարկերի ամրագրման վերանայում և մասՀանումների ճշտում, Հարկային արտոնությունների ընձեռում, տեղական Հարկերի (տուրքերի և վճարների) օրենսդրական կարգավորում: Այստեղ նշենք, որ Համայնքների բյուջեներին ամրագրված Հարկերը միայն ֆիսկալ դեր չեն խաղալու, և միայն այդ տեսանկյունից է, որ իրականացվելու է այս կամ այն Հարկը Համայնքների բյուջեներին այս կամ այն մասՀանումային չափերով ամրագրումը:

Անշուշտ, Հարկային Համահարթեցումը չի կարող լուծել մեկ բնակչի հաշվով Հավասար Հարկային եկամուտներ ապահովելու խնդիրը՝ ամեն մի Համայնքի առումով: Այստեղից էլ առաջանում է Հավասար ֆինանսական պայմանների ընձեռման տեսանկյունից Համայնքներին դուրսացման տեսքով

պաշտոնական տրանսֆերտներ Հատկացնելու անհրաժեշտությունը: Կարծում ենք, որ «Ֆինանսական Համահարթեցման մասին» օրենքի «գ» գործոնով Հատկացվող դոտացիայի մեխանիզմը ի վիճակի է լուծելու այդ հարցը:

Հարկարյուլետային Համահարթեցման երկրորդ խմբով Հիմնական շեշտը դրվում է Համեմատաբար Հետ մնացող Համայնքների առաջանցիկ զարգացման, այսինքն՝ Համայնքներում կենսապայմանների Համահարթման վրա: Այստեղ Համահարթեցումը կարող է կատարվել մի քանի ուղղություններով: Անդրադառնալով դրանցից յուրաքանչյուրին:

Առաջին ուղղությունը բնակչության կենսապայմանների առումով Հետ մնացող Համայնքների առաջանցիկ զարգացման ապահովումն է՝ լրացուցիչ դոտացիաներ տալու միջոցով: «Ֆինանսական Համահարթեցման մասին» օրենքը այս խնդիրը կարծես թե կարող է լուծել «բ» գործոնի միջոցով՝ դոտացիա է Հատկացվում բոլոր Համայնքներին՝ տվյալ Համայնքի բնակչության թիվը բազմապատկելով մեկ շնչին ընկնող դոտացիայի մեծությամբ: Սակայն բնակչության թվաքանակը արտահայտում է ընդամենը տեղի բնակչության թիվը, բայց ոչ կենսապայմանները, և Հնարավոր է, որ Համեմատաբար լավ կենսապայմաններ ունեցող Համայնքները, ունենալով բնակչության մեծ թվաքանակ, տանեն կենսապայմանների Համահարթեցման Համար պետական բյուջեով Հատկացված միջոցների մեծ մասը: Բնականաբար, այս պարզունակ մեխանիզմը չի ապահովում Համայնքների ներդաշնակ զարգացման սկզբունքի իրականացումը: Կարծում ենք, այս խնդիրը ճիշտ է և Հնարավոր է լուծել քաղաքային և դոլդական Համայնքների սոցիալ-տնտեսական Համակարգը բնութագրող մասնակի և ընդհանրացման բարձր աստիճան ունեցող ցուցանիշների օգտագործմամբ՝ Հաշվարկվող միարժեք և միասնական դնահատման մեկ ընդհանրական ցուցանիշի (չափանիշի) օգնությամբ: Տարբեր ցուցանիշներից մեկի՝ դրանց ընդհանրականի ձևավորումը կարելի է անել ՄԱԿ-ի մարդկային զարգացման կոմիտեի առաջարկած Համաթվի (ինդեքսի) կազմման նմանակությամբ կամ էլ այլ մաթեմատիկական եղանակներով: Ընդ որում, ընդհանրական ցուցանիշը ձևավորող ցուցանիշների ընտրությունը պետք է կատարվի այնպես, որ դրանք արտացոլեն տարածքային միավորի կարևորագույն կողմեր, լինեն չափելի և տեղեկատվությանը Հասու: Այդպիսի ցուցանիշներ կարող են լինել աշխատուժի զբաղվածության մակարդակը, կյանքի միջին մակարդակը, բնակչության՝ բնակարաններով ապահովվածության աստիճանը, բարեկարգված (փողոցների, Հրապարակների, մայթերի) մակերեսների Հարաբերակցությունը չբարեկարգվածներին, բնակչության՝ խմելու ջրով օրական ապահովության, ուղղման, ջրահեռացման ցանցերի քաղաքավածության աստիճանը, մաքրվող և չմաքրվող տարածքների Հարաբերակցությունը, երեխաների ընդդրվածությունը նախադպրոցական, արտադպրոցական դասարաններ (երաժշտական դպրոց, գեղարվեստի դպրոց, մշակույթի Հիմնարկներ և այլն): Անշուշտ, այս ցուցանիշները կարող են օգտագործվել նաև առանձին վերցրած, սակայն դրանց միատեղումը Հնարավորություն կտա միանշանակ դնահատումներ կատարել, ուսումնասիրել նաև, ըստ այդ բաղադրիչների, Համայնքի զարգացման գինամիկան: Այս գնահատումները և Հաշվարկները, կարծում ենք, կարևոր Հիմք կարող են դառնալ նաև տարածաշրջանային քաղաքականության իրականացման Համար՝ սահմանադատել բարձր կենսապայմաններ ունեցող Համայնքները միջինից և թույլից:

Երկրորդ ուղղությունը առաջնային օժանդակության կարոտ համայնքներին լրացուցիչ դոտացիայի հատկացումն է: Այս խնդրում մենք լիովին համամիտ ենք «Ֆինանսական համահարթեցման մասին» օրենքում բերված մոտեցումներին և մեխանիզմներին, միայն նշենք, որ չափից դուրս մեծ է ՀՀ կառավարության հաստատած ցուցակով պետության կողմից առաջնային օժանդակություն ստանալու անհրաժեշտություն ունեցող համայնքների թիվը, և, բնականաբար, տեղի է ունենում միջոցների փոշիացում: Թե ինչ չափանիշներից ելնելով են ընտրել այդ համայնքները՝ մեզ հայտնի չէ, բայց որ պիտի սահմանել ստույգ չափանիշներ և ապա, ընտրություն կատարելով, կրճատել դրանց թիվը, անվիճելի է: Այս ցուցակը մեկընդմիշտ սահմանված չպետք է լինի, ինչպիսին, օրինակ, կարող են լինել ՀՀ կառավարության հաստատած ՀՀ բնակավայրերի դասակարգումն ըստ բարձունքային նիշերի (ՀՀ լեռնային բնակավայրերի ցանկ, ՀՀ բարձր լեռնային բնակավայրերի ցանկ) կամ ՀՀ սահմանամերձ համայնքների ցանկը: Այն պարբերաբար, գուցե և ամեն տարի պետք է վերանայվի՝ առաջարկված չափանիշներին և տեղեկրում կատարված առաջընթացին համապատասխան: Այս ուղղությամբ կատարվող հատկացումների առումով, մեր կարծիքով, ուսումնասիրության են արժանի հատկացվող միջոցների նպատակայնության սահմանման, այսինքն՝ սուբվենցիաների տեսքով հատկացման և այս միջոցների օգտագործմանը մարզպետարանների առավել գործունե մասնակցության ապահովման խնդիրները:

Երրորդ ուղղությունը համայնքների պարտադիր լիազորությունների չրջանակում գտնվող ոլորտներում առկա սուր հիմնախնդիրների (ըրապահովում, ջրահեռացում, ջեռուցում, ճանապարհային ցանց, գազիֆիկացում, բնակարանային ապահովում և այլն) լուծմանն ուղղված նպատակային հատկացումներն են՝ սուբվենցիաները, որոնք ևս, ըստ էության, համահարթեցման ֆունկցիա ունեն: Այս սուբվենցիաները կապիտալ ծախսումների համար տրվում են այն համայնքներին, որոնք բավարար միջոցներ չունեն և, ըստ էության, զարգացման տեսանկյունից կարող են հայտնվել ծանր կացություն առջև: Ինչ խնդիրներ ենք տեսնում այստեղ, որ կարոտ են լուծման: Նախ, սուբվենցիաները համայնքներին հատկացվող սուբսիդիաների մեջ ավելի մեծ բաժին պետք է կազմեն, քան այժմ են: Սուբվենցիաները 1999թ. կազմում են ՀՀ համայնքների պլանավորված եկամուտների ընդամենը 1,5 %-ը կամ դրանց հատկացվող պաշտոնական տրանսֆերանների 6,4 %-ը, և դա այն դեպքում, երբ Հանրապետությունում վարվում է տարածքային պասիվ քաղաքականություն:

Պակաս կարևոր խնդիր չէ սուբվենցիաների նպատակայնության ապահովումը՝ ըստ առաջնային նշանակության խնդիրների հետևողական լուծման: Այսպես, նպատակահարմար է առաջին երեք տարվա համար սահմանել այս միջոցների առաջնային ծախսման երկու կարևոր ուղղություններ՝ օրինակ, համայնքներում խմելու ջրի ապահովվածություն կամ գազիֆիկացում, և սուբվենցիաները հանրապետության մասշտաբով հատկացվին այս ուղղություններով: Այս հարցերում մարզպետարանները, քաջ ծանոթ լինելով առկա իրավիճակին, կարող են կողմնորոշվել, առաջնային կարիք ունեցող համայնքներին կամ դրանց խմբին համապատասխան ծախսումներ կատարելով՝ մշակել նախագծեր և սուբվենցիայի ստացման հայտ ներկայացնել: Սուբվենցիաները ժամանակի մեջ կայուն ուղղություններով հատկացնելու պրակտիկան թույլ կտա ՀՀ ֆինանսների, էկոնոմիկայի նախարարություններին

ՀՀ Աղղային ժողովին ներկայացվող պետական բյուջեի տարեկան նախագծերում նախապես ունենալ ոչ թե միայն սուբվենցիաների չափը, այլև բաշխումը ըստ Համայնքների:

Այսպիսով, «Նիւնանսական ՀամաՀարթեցման մասին» ՀՀ օրենքը կարիք ունի արմատական բարելավման, և առաջիկայում դրա վերանայման դեպքում վերը նշված մեր առաջարկությունները, թերևս, կարող են իրենց նպաստը բերել այդ գործընթացին:

ОЦЕНКА И ОСНОВНЫЕ НАПРАВЛЕНИЯ МОДЕРНИЗАЦИИ СИСТЕМЫ ФИНАНСОВОГО ВЫРАВНИВАНИЯ В РА

О.К. АРУТЮНЯН

Р е з ю м е

Начиная с 1999г. выделение дотаций муниципалитетам в Республике Армения осуществляется согласно Закону РА "О финансовом выравнивании".

На основании анализа особенностей закона и оценки реальной картины дотаций муниципалитетам РА за 1999г. и в связи с его действием выявлены серьезные недочеты предлагаемого в законе механизма распределения дотаций.

Поэтому представляется обязательным и необходимым пересмотр закона финансового выравнивания, который может быть осуществлен при условии действия двух необходимых факторов: обеспечения финансирования и повышения жизненного уровня.